

**ՎԱՐԴԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու**

ՍՅՈՒՆԻՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆԸ VI ԴԱՐԻ ԿԵՍԻՆ

VI դարի երկրորդ կեսը Հայաստանում մշամավորվեց քաղաքական և կրոնադպահաբանական մի շարք կարևոր իրադարձություններով: Քաղաքական և կրոնական խնդիրների փոխկապակցվածությունը հաճացեցրել էր Արան, որ մեկ ասպարեզում տեղի ունեցող գործընթացներն ամսուասիելիորեն արձագանք էին գտնում մյուսում:

Նշված երևությունները բնորոշ էին նաև Սյունյաց աշխարհին և արտացոլվել են Արա VI դարի երկրորդ կեսի կրոնաքաղաքական խնամկարում:

Ինչպես հաղորդում է Ստ. Օրբելյանը, Սյունյաց մեծարմաբավ եպիսկոպոս Պետրոս Քերթողին (549-558) հաջորդել է Գիգան՝ աթոռակալելով երեք տարի (559-562): Պատմիչը նրա գործունեության մասին բացարձակապես ոչ մի տեղեկություն չի հաղորդում¹: Որոշ օտար աղբյուրներ Գիգանին հիշատակում են նաև Գրիգոր անվամբ²: Նկատի ունենալով նրա աթոռակալման ժամանակաշրջանը՝ ենթադրվում է, որ այն համգիստ և ամսիով չի անցել, սակայն խոչոր կրոնավաճանաբանական իրադարձությունների հիշատակություններ, այնուամենայնիվ, չկան:

Գիգանից հետո Սյունյաց եպիսկոպոսական Աթոռուն անցավ Հայ Եկեղեցու VI դարի նշանավոր գործիշներից մեջին՝ Տեր-Վրթանեսին: Նրա պաշտոնավարման ժամանակաշրջանը հարուստ էր լուրջ քաղաքական և կրոնական իրադարձություններով: Վրթանես եպիսկոպոսի մասին աղբյուրները կենսագրական տեղեկություններ չեն հայտնում: Օրբելյանը հաղորդում է հետևյալ տեղեկությունները Վրթանեսի մասին: Վրթանես Սյունեցին աշակերտել է մեծարուչակ Պետրոս Քերթողին: «Երանելի աշակերտն Պետրոսի՝ Սուրբ Վրդանէս»³:

Ենթադրվ այս վկայությունից՝ կարելի է ենթադրել, որ Վրթանեսը սովորել է Սյունյաց վարդապետարանում VI դարի կեսին, որտեղ և աշակերտել է Պետրոս Սյունեցուն: Այդ ժիմամբ, նա հավանաբար ծնվել է 520-530 թվ.: Ուսանած լինելով Սյունյաց դպրոցում՝

¹ Պատմութիւն Զահանգին Սիսական, արարեալ Ստեփամանի Օրբէկան արքավիսկոպոսի Սիմեոն, Թիֆլիս, 1910, գլ. ԻԲ, էջ 91: Ն. Ակիմեան, Պետրոս եպիսկոպոս Սիմեոն, Հանդէս ամսօրեալ, 1903, N 8, էջ 252: Հայ Ղ. Ալիշամի կազմած գալաքամագրք՝ Գիգան աթոռակալել է 556-558 թվ. (տե՛ս Ղ. Ալիշամ, Սիսական, Վեմստիկ, 1893, էջ 20):

² Հայ Հ. Աճայամի՝ Գիգան անվամ ծագումն ամրապն է և միակ հիշատակությունն այս է (տե՛ս Հ. Աճայամ, Հայոց անձնանութերի բառարան, Բ. Ա. Երևան, 1942, էջ 471):

³ Տե՛ս Հ. Բարթիկյան, Narratio de rebus Armeniacis, Բուռարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբանյուր, Բամբեր Մատեմատիկամի, N 6, Երևան, 1962, էջ 466, ծամոթ. 65, հմմտ. Լ. Մ'ղիբերթեկ, Վրաց աղբյուրները Հայաստամի և Բայերի մասին, Բ. Ա. Երևան, 1934, էջ 79:

⁴ Ստ. Օրբէկան, նշվ. աշխ., գլ. ԻԲ, էջ 91: Որոշ ուսանասիրողներ պահպանում Վրթանես Սյունեցուն նույնացնում են Վրթանես Քերթողին, որը 604-607 թվ. եղավ կաթողիկոսական տեղապահ (հմմտ. Գ. Գալէմքնարեան, Սիմեոն դպրոցը, «Տաճար» շաբաթաթերթ, 1911, N 48, էջ 764-766):

Վրթանեսը, եթե ոչ կատարելապես, բայց և պատշաճ չափով, պետք է տիրապետած լինի քերթողական արվեստին, սակայն աղբյուրներում չկա որևէ հիշատակություն նրա հեղինակած գործերի մասին:

Սյունյաց դպրոցի աշակերտ լինելը է հենց Բիմբ տվել որոշ ուսումնասիրութեարի նրան ևս մեծարել Քերթող պատվատիտոսով: Նրա մասին Ալիշանը գրում է. «Նշանաւոր եղան և Վրթանէս եպիսկոպոս՝ նոյնպէս Քերթող կոչեցեալ՝ յես կոյս Զ դարու»⁵:

Վրթանեսը Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրվել 562 թ.: Նրա ձեռնադրման պարագաների մասին հիշատակություններ ունի Մովսես Կաղանկատվացին: Հատ Աղվանից պատմության նեղինակի՝ այդ արարողությունը տեղի է ունեցել Աղվանքի եկեղեցում, Զաքարիա Կաթողիկոսի կողմից⁶: Այս վկայությունը պատմիչը բացատրում և Բիմնավորում է նրանով, որ Պետրոս Սյունեցին իր հաջորդներին պատգամել էր ձեռնադրություն և մյուռն ստանալ Աղվանքի Եկեղեցուց: Սակայն նրա շարադրանքում նկատելի են ժամանակագրական անհամաձայնություններ և փաստերի որոշ աղավաղում: Այստեղ համարված են տարբեր ժամանակներում տեղի ունեցած և իրար հետ շփոթած անցքեր⁷:

Հատ VI-VII դարերի Աղվանից Եկեղեցու նվիրապետության գավազանագրքի՝ Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին ժամանակակից է Աղվանքի ոչ թե Զաքարիա, այլ Արքա Կաթողիկոսը (551-595): Իսկ Զաքարիա Բ-ն կաթողիկոս է եղել Վիրոյից (596-630) մետք՝ 630-644 թթ.⁸: Հետևաբար, VI դարի 60-ական թվականներին եպիսկոպոսական Աթոռին նստած Վրթանեսը չեր կարող ձեռնադրություն ստանալ ավելի քան կես դար հետո աթոռակալած Զաքարիա Կաթողիկոսի կողմից: Ուստի ենթադրում ենք, որ Վրթանեսը եպիսկոպոս է ձեռնադրվել Հայոց Կաթողիկոս Հովհաննես Բ Գարեղենեցու (557-574) կողմից: Այս ենթադրության օգտին է խոսում նաև վերջինին՝ հետագա բարեჩան վերաբերվելու փաստը Սյունյաց թեմի և Վրթանեսի նկատմամբ:

Վրթանես եպիսկոպոսի կենսագրությանը վերաբերող Ստ. Օրբելյանի հաղորդած հաջորդ կարևոր տեղեկությունը նրա առնչությունն է Հայոց տոմարի բարեփոխության հարցով հրավիրված եկեղեցական ժողովին: Նա հայտնում է, որ Վրթանեսը Սյունյաց եպիսկոպոս էր, եթե Դվինում մեծ ժողով գումարեցին և սահմանեցին Հայոց թվականը: Սյունյաց հոգևոր և աշխարհիկ առաջնորդները միակամ օժանդակել են այդ գործից՝ Դվին ուղարկելով համապատասխան գիտելիքներով մարդկանց. «Արդ՝ ի կարգել թուականին մեծաւ ժողովով ի Դվին քաղաքի, եր եպիսկոպոս Սիմեոն Տէր Վրթանէս, և իշխան՝ Տէր Միհր-Արտաշիդ, որք եւ միաբանեալ ժողովոյն յուրկեցին զիմաստուն վարդապետուն

⁵ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 23:

⁶ Տե՛ս Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, գիրք Բ, գլ. ԽԸ, էջ 274: Ստ. Օրբելյան, Աշվ. աշխ., գլ. ԻԲ, էջ 91: Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, գիրք Բ, էջ 119-120: Թումսն երամելոյն Մաշտոցի, «Արարատ», 1902, Ն 7-8, էջ 751:

⁷ Տե՛ս Է. Դանիելյան, Արման-ալանությունների պատմությունը և առաջնահարությունը Արման-Արաբական պատմությունը, ԱՀ Արմ. ԱՊ, 1988, Ն 4, ստուգ. 27, պրմ. 27:

⁸ Տե՛ս Ն. Ակիմեան, Մովսես Դավիթուանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր պատմութիւնն Աղուանից, «Համես ամսօրեայ», 1953, Ն 7-9, էջ 572:

զկատարեալ գիտնական իրեամց, որը էին նախաթոռ ի վարդապետան Հայոց և ուղղեցին զայն տարակուսեկի տումարն»⁹:

Այս ժողովը, որին մասնակցում էին «քերթող» և գիտունք արուեստին», 584 թ. հրավիրել էր Հայոց Մովսես Բ Եղիշարդեցի Կաթողիկոսը (574-604): Այնուեղ պաշտոնապես ընդունվեց Հայոց տումարի բարեփոխությունը: Առաջին հայացքից պատմիչի այս վկայությունը հակասում է պատմության Կմբ գլխում հիշատակված այն փաստին, թե տումարի նորոգության ժողովին մասնակցում էր Պետրոսը¹⁰: Սակայն Պետրոս Սյունեցին մասնակցել է Դվինի 554 թ. Եկեղեցական ժողովին¹¹, եղել նրա նախաձեռնողներից և նշանավոր անդամներից մեկը¹²: Որպես քերթող և գիտում նա զբաղվել է նաև իր ժամանակ արդեն հրատապ դարձած տումարի կարգավորման խնդրով, որը քննարկվել է 554 թ. Դվինի ժողովում, սակայն վերջնական լուծում չի ստացել¹³: Այդ առումով նրան հրավացիորեն կարելի է համարել Հայոց տումարի նորոգման մասնակից և տումարագետ¹⁴: Ինչ վերաբերում է 584 թ. ժողովին Պետրոս Սյունեցու ներկայությամբ, ապա նա հնարավոր չէր, քանի որ նա վաղուց վախճանվել էր¹⁵:

Ցավոք, 584 թ. ժողովին մասնակցած այսնեցի վարդապետների և գիտնականների անունները մեզ չեն հասել, բայց, անտարակուս, նրանք եղել են նշանավոր մոտածողներ: Հայանական ենք համարում, որ այդ գիտնականներից մեկը նույնպես ունեցած լինի Պետրոս անունը, ինչն էլ կարող էր լինել շիփության պատճառ՝ վերագրելու մասնակցությունը հայտնի Պետրոս Սյունեցուն:

Վրթամեն եպիսկոպոսի մասին երրորդ տեղեկությունը վերաբերում է նրա պաշտոնավարման ժամկետին, որը տևել է քսաներեք տարի՝ 562-584 թթ. «Եւ այնպէս ճշմարիտ վարդապետութեամբ և առաջինի վարութ կացեալ յԱլյոն մեստրապօլտութեան զամս քսաներեք՝ փոխի յաստեացս», - գրում է Ստ. Օրբելյանը:

⁹ Ստ. Օրբելյան, Աշվ. աշխ., գլ. Ի՛Ռ, էջ 97:

¹⁰ Խովս տեղում, գլ. Կթ, էջ 454:

¹¹ Դվինի եղիշորդ, Եկեղեցական ժողովը հրավիրվել է Հայոց Կաթողիկոս Ներսես Բ Բագրևանցը (Կթ. 548-557 թթ.) կողմից: Ժողովի գլխավոր խմբիրը նեստորականների գործունեության սահմանափակումն ու արգելումն էր Հայաստանում (տե՛ս Մ. Օրմանեան, Ազգապատում, մասմ Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 546-547, հմտ. Ն. Մելիք-Թամանյան, Հայոց Եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Ծուշի, 1903, էջ 366-368):

¹²Տե՛ս Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 72, 76, 222: Ստեփանոսի Տարօնեցոյ Աստղկան Պատմութիւն տիեզերական, Ա. Պետրորուդ, 1885, գիրք Բ, գլ. Բ, էջ 82-83: Լ. Մելիքսեն-Բենկ, Աշվ. աշխ., Բ. Ա, էջ 40: Թուղթ Միթրար Վարդապետին, որ Գոշն կոչիր, «Արարատ», 1900, Խ 10, էջ 502:

¹³ Տե՛ս Մ. Օրմանեան, Աշվ. աշխ., էջ 553-554: Հ. Բաղդայան, Օրացուցի պատմություն, Երևան, 1970, էջ 65: Խոյմի՝ Հայոց տումարի պատմություն, Երևան, 1976, էջ 28:

¹⁴ Հմոն. Ղ. Ինճիթեան, Հայաստանութիւն աշխարհագրական Հայաստանեայց, Բ. Գ, Վեճնտիկ, 1835, էջ 131: Գ. Զարքիանալեան, Հայկական նին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԴ դր.), Վեճնտիկ, 1897, էջ 412-413:

¹⁵ Թե՛ Աստղիկը և թե՛ Վարդան Արևեցին միարան են Հայոց տումարի նորոգության գրծում Պետրոսի մասնակցության հարցում, սակայն Վարդան Արևեցին միամբամք, բացի Դվինի երկրորդ ազգային Եկեղեցական ժողովից, Պետրոսին մասնակից է մկասում նաև 584 թ. Դվինի ժողովին, ինչն էլ նույնությամբ կրկնել է Ստ. Օրբելյանը (տե՛ս Աստղիկ, գիրք Բ, գլ. Բ, էջ 82-83: Հայաքում պատմութեան Վարդապատի, էջ 57-58):

Այժմ անդրադառնաք այն կացությանը, որը ստեղծվել էր Սյունիաց թեմում Վրթանեսի եպիսկոպոսության շրջանում: Պետք է նկատել, որ նրան վիճակված էր հովվել Սյունիքի համար շատ բարդ ժամանակաշրջանում: Այդ ընթացքում Սյունիաց Աթոռոր գտնվում էր փորձությունների, դիմակայման և մաքառման գործընթացում, երբ հարևան պետություններն անթաքուց խրախուսում և օժանդակում էին իրենց երկրներից տարբեր կրոնական խմբերի անցումը Հայաստան: Նրանք հաստատվում էին ծայրամասային նահանգներում, որ ավելի հետո և արդյունավետ էր գործունեություն ծավալելը:

Աշխարհագրական դիրքի բերումով Սյունիքը զգայում էր նման անցուդարձների նկատմամբ: VI դարի երկրորդ կեսին Սյունիքում որոշ տարածում էին գտնել Անստորականությունը և քաղկեդոնականությունը¹⁶: Այս մասին Սյունիաց պատմիչը գրում է. «Թաւուր Տեան Վրդանիսի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, եկին ոմանք Անստորականք և քաղկեդոնիկը, և խարկանօք բնակեցան յաշխարհն Սիսական և յԱղվան»¹⁷:

Մավալեով իրենց քարոզչությունը Սյունիքում՝ որոշ կրոնական խմբեր անցնում էին նաև կենտրոնական Հայաստան: Այդ փաստի լավագույն վկայությունը Հիգտրուգիտի ընդարձակ և վավերական վկայաբանության հետևյալ հատվածն է, որը ներկայացված է, թե ինչպես Անստորականները Սյունիքով Անրթափանցում են Հայաստանի կենտրոն և հաստատվում այնտեղ. «Սա (Հիգտրուգիտո - Վ. Ա.) ի դիպուածոյ իմերէ ի բանակս թագաւորին հասամեր և պատահէր չարչարանաց սուրբ Վկայի ուրումն, որում անուն էր Գրիգորիս: Հրաշացեալ ընդ համարձակութիւն նահատակին... յայնմիեւէ զղմամբ ունէր զմոգութիւնն: Գայր անտի յաշխարհն Սիւնեաց, պարապելով յունկներութիւն գրոց սրբոց և լեալ անդ սակա ամիս՝ հասամէ ի Հայս. և եկեալ յԱրարատ գաւառ՝ բնակէր յոստանին Հայոց ի Դուին»¹⁸:

Փաստորեն, Դվինի 554 թ. ժողովից հետո Հայաստանում Անստորականության և քաղկեդոնականության ուժը ոչ միայն վերջնականացես կոտրված չէր, այլև նրա մի կարևոր հաստվածում, ինչպիսին Սյունիքն էր, նրանք տակավին կենտրոնակ էին: Թեև երևություն կրոնական բնույթ ունի, սակայն անկասկած թերի կլինի հարցին մոտենալ միայն այդ տեսանկյունից: Այն պետք է ուսումնասիրել կրոնական և քաղաքական խնդիրների համատեքստում: Կարծում ենք, որ դա գերազանցապես պայմանավորված էր նոր քաղաքական կացությամբ, որ ձևավորվել էր Սյունիքում VI դարի 70-ական թվականներին:

572 թ. հայոց հակապարսկական ապստամբության նախօրյակին կարևոր ուազմավարական դիրք գրավող և ուազմական մեծ ուժի տիրապետող Սյունիք նահանգը վարչականորեն դուրս եկավ Դվինում նստող պարսիկ մարզպանի ննթակայությունից: Սյունիաց իշխան Վահանը 571 թ. նահանգի դիվանը Հայաստանի մայրաքաղաք Դվինից տեղափո-

¹⁶ Անստորականությունը և քաղկեդոնականությունն այս շրջանում շատ հաճախ նույնացվել են և փաստաթյուրում գործածվել միմյանց փոխարեն (տե՛ս Ե. Տէր-Մինասեանց, Հայոց Եկեղեցու յարաքրութիւնները աստրոց Եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 107; Մ. Օրմանեան, Աշվ. էջ 560):

¹⁷ Ստ. Օրբէեան, Աշվ. աշխ., գլ. ԽԵ, էջ 98:

¹⁸ Վարք և վկայաբանութիւնց սրբոց, հատումնուի քաղեալք ի ճառընտրաց, Վեմեսիկ, 1874, Բ. Բ, էջ 124-125:

խեց Փայտակարան¹⁹: Սրանով Սյունիքը հեռու էր պահվում հաստինացող հակապարսկական շարժումներից, նետնաբար Հայաստանի ուժը գգալիորեն պակասում էր:

Հայտնի է, որ այս շրջանում Սյունի իշխանները բարձր դիրքեր էին գրադեցնում Սասանյանների արքունիքում՝ ընդհուպ գրադիվով Պարսկաստանի սահմանների անվտանգության հարցերով²⁰: Ուստի Վահան իշխանի դիմումը Խոսրովին՝ դուրս բերել Սյունյաց նահանգը Աստրապատականի հրամանատարությանը և նշանակ Դվինի մարզպանի դիվանից և ներթարկել Աստրապատականի շահրմարին, կարելի է ասել, որ համընկնում էր Պարսկաստանի շահերին: Հավանական է, որ այն հրամրված էր Բենաց պարսիկների կողմից²¹: Մինչ այդ պահը Սյունիքը հպատակ էր Դվինի հայոց մարզպանին, որն էլ իր հերթին կախված էր Աստրապատականի սպայապետից: Այդուհետ Սյունիքը ուղիղ կախում ունեցավ Աստրապատականի սպայապետից և դադարեց մարզպանության մաս լինելուց: Եթե մինչ այդ հրարկը վճարում էր Դվինին, ապա դրանից հետո պետք է վճարեր Աստրապատականին և պատերազմի ժամանակ էլ իր գորագնդերը դներ Աստրապատականի սպայապետի հրամանատարության տակ:

Այդ ժամանակվանից Արցախի «Մեւ Հաբան» գավառը դարձավ Սյունյաց նախարարության կենտրոն, կոչվում էր նաև Սիսական ի Ռատան կամ Սիսական ի Կոտապ²²: Մարզպանությունից Սյունիքի անջատ գոյությունը տևեց գրեթե 70 տարի (571-640), մինչև Սասանյանների վայրէցքի ժամանակները: Սյունիքի նոր քաղաքական կարգավիճակը պարարտ հող ստեղծեց Անտորիականների և օտարամուտ այլ հոսանքների մերժափանցման և գործունեության համար:

Ահա այսպիսի տագնապահարուց իրավիճակը եղավ դրդապատճառը, որ սեփական հոտի ճակատագործ մտահոգ Հայոց Կաթողիկոս Հովհաննես Գաբրել ենեցին (Աթ. 557-574) հանդես եկավ Սյունյաց հոգևոր և աշխարհիկ իշխանություններին ուղղված պաշտոնական թղթով²³: Նրա խնդիրն էր կանխել չարիքը՝ դրանից բխող բոլոր վտանգավոր հետեւկանքներով: Այս գորությունը շատ կարևոր մի փաստաթուղթ է, ուր արտացոլված են Հայ Եկեղեցու ընդհանուր վիճակը, Կաթողիկոսական կենտրոնի և Սյունյաց Աթոռուի փոխհարաբերությունները: Այն հավանաբար գրվել է 570-ական թվականների սկզբին:

¹⁹ Տե՛ս Պատմութիւն Սերեսոսի. Աշխատասիրությամբ Գ. Արգարյանի, Երևան, 1979, գլ. Ը, էջ 67-68:

²⁰ Դերբննի անցումի (Ծորա պահակ) և Դարիալի կիրճի պաշտպանությունը քոչվոր ցեղերի ասպատակություններից Վ-ՎI դդ. դրված էր Սյունիքի նախարարների վրա (տե՛ս Ս. Երեմյան, Հօպուր և օօրոն հասանական կառուցումների և Սյունյաց Աթոռուի փոխհարաբերությունները: Այն հավանաբար գրվել է 570-ական թվականների սկզբին):

²¹ 572 թ. հակապարսկական ապատամրությունը գիշավորում էին Սամիկոնյանները: Ելենով այս փաստից, Ն. Ակիմանը Սյունիքի վարչական անջատումը բխեցնում է Սյունիքների և Սամիկոնյանների ունեցած ավանդական տարրեր քաղաքական կողմնարոշումներից (տե՛ս Ն. Ակիման, Թուղթ Մակարայ Բ Երսասահնի Հայրապետին առ Վլթամէս եպիսկոպոսապետ Սիմեոնց, յաղագ կարգաց Եկեղեցւոյ, Վիճանա, 1930, էջ 52, նույնի՝ Դվինը 572 թ. ապատամրութիւնը եւ յաջորդ տասնամեայ շրջանը, «Համբէս ամսօրեայ», 1913, N 1, էջ 67 և 76, ծանոթ. 9): Է. Դամիելյանը գտնում է, որ Վահան Սյունիքու այդ քայլը ուղղված էր պարսից մարզպան Սուրեն դեմ (տե՛ս Է. Դամիելյան, Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591-629), Լուրեր հասարակական գիտությունների, 1986, N 8, էջ 58):

²² Տե՛ս Ս. Երևանյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 70:

²³ Տե՛ս Գիրք թղթոց, էջ 78-80: Ստ. Օքքենան, Աշվ. աշխ., գլ. ԻԳ, էջ 92-96:

Հովհաննես Բ Կաթողիկոսի հետ միասին ստորագրված է նաև «Աբրահամայ Տարաւանոյ և Մամիկոնեացից, Ներսայ Բասենոյ և Մարդաղոյ, Մաշղոց Խոռվառութեաց, Գուալ Վաճանեայ, Արդիսոյ Ասորեաց և Բար Ամատութեաց» եպիսկոպոսների կողմից: Կաթողիկոսական թուղթը նախապես հոչակում է Հայոց Աթոռի առաքելականությունը:

Հիմք ընդունելով երեք տիեզերական ժողովների՝ Նիկիայի (325 թ.), Կոստանդնուպոլիսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) դավանաբանական որոշումները, կաթողիկոսը հերքում է Անստորականների ուսմունքը: Ընդգծում է Խուժիստանից նրանց մուտք գործելը Հայաստան և այդ պատճառով 554 թ. Դվինի եկեղեցական ժողովի գումարումը, «ընդ որս էր և երանելին Պետրոս եպիսկոպոսն Ձեր»²⁴:

Այս ամերաժեշտ նախարարնեցից հետո կաթողիկոսն անցնում է բուն Այութիմ՝ փասելով, որ «պեղծ Անստորականք բազումք ի ձեր աշխարհիդ բնակեալ են, և դուք զդոսա ի սուրբ Եկեղեցիս ընդունիք և ընդ դոսա հաղորդիք»²⁵: Նա նաև հիշեցնում է Գրիգոր Լուսավորչի մեծ վաստակը լուսավոր և ճշմարիտ հավատը Սյունիքում սերմանելու գործում Սյունյաց ու Հայրապետական Աթոռների սերտ կապվածությունը, փոխադարձ հոգևոր սեռ:

Կաթողիկոսն իր պարտքն է համարում գգուշացմել և ազդարարել, որ, ինչպես մինչևս այժմ հավատարիմ են մնացել Գրիգոր Լուսավորչից և այլ հոգեկիր սուրբ հայրերից ընդունած ճշմարիտ հավատին, այսուհետ էլ նովնը հաստատ ու ամփոփու պահեն: Հորդություն է մերժել և չընդունել Անստորականներին, չլսել «հրապուրող և չարաթոյն բամից նոցա մահաբերաց... ոչ ընդունել զնոսա ի սունա, ոչ ողջունել բամի, այլ հեռանալ ամենին ի նոցան: Որպէս ի թշնամեաց խաչին Քրիստոսի»²⁶: Գրությունն ավարտվում է նրանով, որ թույլ է տրվում հերձվածողներին վերստին ընդունել Հայ Եկեղեցու գիրկը ապաշխարությամբ, եթե միայն նրանք կամովին արտահայտում են իրենց զղջումը և գրավոր նզում նետորին ու բոլոր հերձվածողներին, ինչպես նաև Քաղկեդոնի ժողովը:

Խնդրո առարկա փաստաթուղթն ամբողջությամբ ներծծված է Սյունյաց՝ ի վերուս ունեցած ուղղադավանության խորհրդով. «Որպէս ցայժմ լեալ էք ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական Տեառն Աստուծոյ, նոյնպէս և այժմ էք և մինչև յախտեան, դուք և զաւակք ձեր»²⁷: Այս պարտավորեցնող հիշեցումը նաև միտված էր ապագա կրոնական շեղումների հնարավորինս կանխամանը:

Սյունյաց աշխարհում կատարվող անցուդարձին և իրենց թղթի գործած ազդեցությանը հավաստիրեն տեղեկանալու համար՝ հատուկ «զհաւատարիմ այր» և երևելի ուսմամբ նոխացած գիտակ պատգամավորի՝ Մատթեոս քահանայի միջոցով նրանք գրությունն ուղարկում են Սյունիքը²⁸: Մատթեոս քահանան պետք է տար նաև լրացուցիչ բացատրություններ, եթե պահանջվեին:

24 Գիրք թղթոց, էջ 79:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 80:

27 Նույն տեղում, էջ 79:

28 Տե՛ս Գիրք թղթոց, էջ 79: Ե. Տեր-Մինասյան, Պատումաբանափրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 377: Մատթեոս երեցը նույն պաշտոնով հիշատակված է նաև Աղվանից Կաթողիկոս Արքային ուղղված թղթում (տե՛ս Մովսէս Կաղամկատուացի, գիրք Բ, գլ. Ե, էջ 125):

Հայոց Կաթողիկոսի գիրը լավ ընդունելություն է գտնել Սյունիքի Միհր-Արտաշիր իշխանի և Վրթանես եպիհակոպոսի կողմից: Այն ծառայել է իր նպատակին՝ զգաստացնելով և ամերածելով գործողությունների մղելով տեղի հոգևոր հովհանքների: Դրանից հետո լուրջ խոչընդունելով և արգելվելով ստեղծվեցին Սյունիքում նեստորականների և այլ աղամունքների գործունեության համար. «Թորութ (Հովհաննես Բ-ի գրությունից – Վ. Ա.) զարթուրեալ Տեսան Վրդանիսի՝ հալածական արար ի վիճակէ իւրմէ: և մեծաւ նզովիք փակեաց զի մի իշխանցեն թողացուցանել սահմանն իւրեանց»,- գրութ է Ստ. Օքբելյանը: Ինարկե, այս խոսքերը չեն նշանակում, թե այդունեւ Սյունիքում նեստորականներ չկային, այնուամենայնիվ զգացվում է, որ հոգևոր պատասխանատունները զգացել են իրավիճակի լրջությունը և դիմել վճռական քայլերի:

Վկայակոչելով Դվինի մարզպանի հպատակությունից վարչականորեն Սյունիքի դուրս գալու փաստը և Հովհաննես Բ Գարենեննեցի Կաթողիկոսի հիշյալ թուղթը՝ որոշ ուսումնասիրողներ արձանագրում են նաև Սյունիքի եկեղեցական անշատումը Հայոց Կաթողիկությունից²⁹: Դատելով ժամանակի զարգացումների բարդ ընթացքից՝ կարելի է ենթադրել, որ քաղաքական անջատումը նաև հոգևոր թեմի հեռացման վտանգ է պարունակել: Հենց այդ ազգավճառ երևոյթը կամնելուն էր միտված կաթողիկոսի քայլը: Պեսոք է ասել, որ Հայոց Հայրապետին հաջողվել է դիվանագիտորեն մեղմել այդ խնդիրը³⁰:

Մեր այս կարծիքը խարսխված է նաև որոշ օտար սկզբնաբրյուրների բովանդակած փաստելի վրա: Ասորի հետինակ Զաքարիա Հովետորի իր «Ժամանակագրության» մեջ, ուր արտացոլված են VI դարի երկրորդ կեսի իրողությունները, հիշատակում է հյուսիսային երկրամասում ապրող հինգ հավատացյալ ժողովուրդներ, որոնք ունեն քանչչորս եպիհակոպուս, և նրանց կաթողիկոսը նատում է Դվինում Արևելյան Հայատանի մայրաքաղաքում: Թվարկելով այդ երկրները՝ երրորդը նշում է Սիսականը. «Ապա Սիսական երկիրը իր լեզվով, հավատացյալ մի ժողովուրդ, բայց այնուեղան ապրում են նաև հեթանոսներ»³¹: Ամենայն հավանականությամբ, Զաքարիա Հովետորի վկայությունը վերաբերում է VI դարի 60-

²⁹ Այս տեսակետը զարգացնում է Հ. Ն. Ակիմանը, ըստ որի՝ Դվինից Սյունիքի քաղաքական հնագույնից հետո, 557-558 թթ., նաև Աթոռով խօնց հարաբերությունները Հայոց Կաթողիկոսության մեջ: Նրա կարծիքով, Սյունիքաց Աթոռով այնքան ամեախ էր և ինքնուրուց, որ հարաբերություններ հաստատեց Երուաղենի Հայրապետի մեջ՝ Վերշինիս օգնությամբ լուծելու նոր պայմաններում առաջացած խնդիրները: Վրթանես եպիսկոպոսը թղթակցում է Երուաղենի Մակար Բ Հայրապետի մեջ և գրանից ստանում համապատասխան հրամաններ, բանգի ծագել էին նոր դավանաբանական և աշխարհակացքային հարցեր (ուն Ն. Ակիման, Թուղթ Մակարա Բ..., էջ 55, 59-69, Առվել, Մովսէս Դաստիարակնեցի ..., «Համելս ամսօրենայ» N 10-12, էջ 585, հմտ. Պ. Անանեան, Պատմական լիշտառակարան մը Դվինի Բ ժողովքի մասին, «Բազմավեպ», 1958, N 3-5, էջ 70-72, Ս. Կողյան, Հայոց Եկեղեցին մինչև Փլորենտյան ժողովը, Բնորութ, 1961, էջ 202-203): Մեր կարծիքով, անհնարինելի է Սյունիքաց քաղաքական ակտին ամփափան տալ նույնանման եկեղեցական շարումներուն, իսկ Երուաղենի մի մեջ ինքնուրուց կապեր հաստատելու և Հայոց Կաթողիկոսության մեջ դավանաբանական տարածայնություններ ունենալու տեսակետն ընթանրապես մերժելի է: Սյունիքը կարող էր քաղաքական պատճառներով բաժանվել Դվինից, Առվելիսկ առանձին լինել հոգևոր կենտրոնից, բայց ոչ հրամարվել Հայ Եկեղեցու պահանջական դպրանքից:

³⁰ Հմտ. Ե. Տեր-Միհանանց, Հայոց Եկեղեցու լարաբերութիւնները..., էջ 136:

³¹ Օտար աղբյուրները Հայատանի և հայերի մասին, Բ. 8, Ասորական աղբյուրներ, Ա, քարգմանություն բնագրից, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 313-314:

70-ական թվականներին: Տեղեկությունն ուշագրավ է հետևյալ առումով. Սյունիքոս վաղոց արմատավորված էր քրիստոնեությունը, իսկ եկեղեցին ենթարկվում էր Դպիճի Կաթողիկոսարանին:

VIII դարի սկզբի հայ-քաղկեդոնական մի սկզբնադրյուր լիարժեք պատկերացում է տալիս նաև Սյունիաց հոգևորականության դավանանքային համոզմումքների մասին, վկայում, որ դավանաբանական խնդիրներ կաթողիկոսական կենտրոնի հետ չեն եղել: Խոսելով քաղկեդոնականություն ընդունած եպիսկոպոսների կողմից Սյունիաց Վրթանես եպիսկոպոսին ուղարկած թղթի մասին՝ անանուն հեղինակը գրում է. «Նույնական և Սյունիաց եպիսկոպոս Վրթանեսին, սակայն նա ևս չէր համաձայնվում ասեղով, որ ինձնից առաջ եղած երանելագույն եպիսկոպոսներ Պետրոսն ու Գրիգոր (Գիգան – Վ. Ա.) այդպես էին ասում «սուրբ Աստվածը», իսկ ես ո՛չ կավելացնեմ, ո՛չ էլ կապականեցնեմ»³²: Այս խոսքերից ակնհայտ երևում է, որ Վրթանեսը դավանական հարցերում շարունակել է Պետրոս Սյունիքու գիծը: Վերջինս համոզված միաբնակ էր և հակաքաղկեդոնական, Հայ Եկեղեցու միասնության շատագով:

Այսպիսով, կարելի է փաստել, որ թեև 571 թ. Սյունիքը վարչականորեն դուրս եկավ Դպիճի մարզպանի հպատակությունից, սակայն նրա Եկեղեցական թեմը շարունակեց նույնությամբ գործել Հայ Եկեղեցու վիհարապետական կառուցվածքում:

Վրթանես եպիսկոպոսին հաջորդեց Գրիգոր Բ-ն, որն աթոռակալեց տասնինգ տարի՝ 584-599 թթ.³³: Սյունիաց պատմիչը հայտնում է, որ նա ձեռնադրվել է Աղվանից Եկեղեցում այս անգամ ձեռնպահ մնալով կաթողիկոսի անունը հիշատակելուց: Հետևելով իրադարձությունների գարգացման տրամաբանությանը՝ կարելի է նկատել, որ Վրթանեսի մահով չվերացավ Հայ Եկեղեցու միասնությանը սպանացող վտանգը և չիարժեվեցին դավանաբանական ոլորտում գոյություն ունեցող կանչուները: Ընդհակառակը՝ ավելի ակտիվացան հարևան պետությունների միշամտությունները Հայ Եկեղեցու գործերը Ա, ինչը Հայաստանի նկատմամբ նրանց վարած քաղաքականության մի բաղադրիչն էր³⁴:

591 թ. պարսկաբյուզանդական պայմանագրով Հայաստանի քաղաքական բաժանմանը հետևեց նրա արևմտյան մասում Ավանում, երկրորդ կաթողիկոսական Աթոռու տեղադրումը, որը բխում էր Հայաստանն անդարձ բռնազավթելու Մավրիկիոս կայսեր (582-602) ծրագրի դրույթներից: Այս առթիվ Սեբեոսը գրում է. «Հրաման եղանէ դարձեալ ի կայսերէն Վերստին այլ՝ քարոզել գժողովն Քաղկեդոնի յամենայն Եկեղեցին Հայաստան երկիր, եւ միաւորել հաղորդութեամբ ընդ զար իր: Իսկ մանկունք ուխտի Եկեղեցեացն Հայոց փախատական գնացեալ յաւտար երկիր վարէին: Եւ բազմաց առ ոչինչ համարեալ զիրաման՝ զտեղի կալան եւ անշարժ մնացին: Եւ բազումք հաւանեալ փառասիրութեամբ հա-

³² Հ. Բարթիկյան, Աշվ. աշխ., «Բանքեր մատենադարամի», 1962, N 6, էջ 465-466, հնմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, Աշվ. աշխ., Բ. Ա., էջ 79, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Բ. 8, Աստրական աղբյուրներ, էջ 391-392:

³³ Տե՛ս Ստ. Օրբելեան, Աշվ. աշխ., գլ. ԻԵ, էջ 98: Ըստ Ղ. Ալիշամի՝ Գրիգոր Բ-ն աթոռակալել է 580-595 թթ. (տե՛ս նույնի, Սիսական, էջ 20): Բրոսսեն գտնում է, որ Գրիգոր Բ-ն մահացել է 621 թ. (տե՛ս Սյունիքի պատմություն, Եերած, Քարգմ. և ծանոթ. Ա. Արքաթամանի, Երևան, 1986, էջ 437, ծանոթ. 263):

³⁴ Տե՛ս Է. Դամիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Արտաքիական Եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 57:

ղորդեալ միատրեցան աւրինաւք: Բաժամեցաւ ապա և Աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մովսէս, և միտւյն՝ Յովհանն: Մովսէս ի Պարսից կողմանէ, և Յովհանն՝ Յումաց: Եւ Յովհանն ընդ նոսա հաղորդեալ միատրեցաւ, բայց Մովսէս ամենեան ոչ լինէր ի նոսա հուաւ»³⁵:

Հակաթոռ կաթողիկոսության ստեղծումը որոշ չափով նվազեցրեց Հայոց Կաթողիկոսության կենտրոնաձիգ ուժը՝ առաջացնելով Ավելիապետական կառուցվածքի նկատելի խաթարում: Կայսրության կողմից պարտադրվող դավանանքային շեղումները լի էին հայոց հոգևոր և քաղաքական ուժերը շլատելու վտանգով³⁶: Որպես հետևանք՝ Գրիգոր Բ եպիսկոպոսի պաշտոնավարման ընթացքում ժամանակավորապես ընդհատվեցին Հայոց Կաթողիկոսության և Սյունյաց Աթոռի փոխարարերությունները: «Զերկուանան Հայրապետութեանն խոտեցին տեարքն Սիւնեաց, և ոչ հաւանեցան ընդ մի ոք յերկուցն», - արձանագրում է Կաղամեկատվացին³⁷:

Խառնացիոթ և վտանգներով հիմ իրավիճակը ստիպեց Սյունյաց առաջնորդներին ժամանակավորապես մեկուսանալ և ակտիվ շփումներ չունենալ Հայոց Կաթողիկոսության հետ: Այդ բանը տեղի է ունեցել 591 կամ 592 թվականներին: Ընդունելով Սյունյաց և Հայրապետական Աթոռների միջև փոխարարերությունների ժամանակավոր ընդհատման փաստը՝ Օրմանյանը գրում է. «Արդ եթէ ոչ Վորթանէս, գոնէ անկէ ետքը եկող Սիւնեաց եպիսկոպոսներ սկսան ձեռնադրութիւն և միուռն ընդունի Աղուանից կաթողիկոսն... և այսպէս ըրած պիտի ըստին գոնէ Գրիգոր և Քրիստափոր»³⁸:

Ստ. Օրբելյանը տեղյակ լինելով այդ փաստին՝ եզրակացրել է, որ եպիսկոպոս Գրիգոր Բ-ն ձեռնադրվել է Աղուանից Եկեղեցու: Սակայն վերջինս աթոռակալել է մինչև 590-591 թթ., հետևաբար նա ձեռնադրություն ստացել է ոչ թե Աղուանից, այլ Հայոց Կաթողիկոս Մովսէս Բ Եղիվարեցու (574-604) կողմից:

590-ական թվականների կեսից սերտացան հարաբերությունները Սյունիքի և Աղուանից Եկեղեցիների միջև: Իրավիճակի թեկարդմամբ վերջիններս հավանաբար որոեգուել էին միասնական գործեղակերպ: Խոսելով VI դարի վերջի և VII դարի սկզբի կրոնական անցուդարձերի մասին՝ վրաց պատմական աղբյուրները և հաստատում են այդ բանը. «Իսկ աղվանները / թերացիք/ ու պյունեցիք միաժմանակ հեռացան և կրկին հարեցան ներսեան»³⁹:

VI դարի վերջին ստեղծված կացությունը հանգեցրեց Սյունյաց եպիսկոպոսության հենինակության նվազմանը: Սակայն այս իրավիճակը երկարատև չեղավ: 606 թ. Դվինի Եկեղեցական ժողովի առաջին հիասում արդեն ներկա էր Սյունյաց Քրիստափոր եպիսկոպոսը: Խակ 607 թ. նա այն գլխավոր եպիսկոպոսներից մեկն էր, որը կաթողիկոս ձեռնադրուց Աբրահամ Աղուանիցուն (607-615):

³⁵ Պատմութիւն Սերեսի, էջ 91:

³⁶ Է. Դամիելյան, Աշվ. աշխ., էջ 58:

³⁷ Մովսէս Կաղամեկատուացի, գիրք Բ, գլ. Խթ., էջ 274:

³⁸ Մ. Օրմանեան, Աշվ. աշխ., էջ 622:

³⁹ Լ. Մալիքսեն-Բենկ, Աշվ. աշխ., Բ. Ա., էջ 39: